

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 04.02.2022 թ. կայացած թիվ 07.21-22 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 29-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ֆիզիկայի ֆակուլտետի «Մակրոմոլեկուլների ֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Վաղարշակ Նարեկի Ավետիսյանին** թեզերի անվանման և գիտական ղեկավարների փոփոխում:
2. Անվանական թոշակ ստացող ուսանողների ընտրություն:

Լսեցին – Ֆիզիկայի ֆակուլտետի «Մակրոմոլեկուլների ֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Վաղարշակ Նարեկի Ավետիսյանին** թեզերի անվանման և գիտական ղեկավարների փոփոխման հարցը:

Ելույթ ունեցավ «Մակրոմոլեկուլների ֆիզիկա» ամբիոնի վարիչ Ե. Դալյանը: Նա նշեց, որ Վ. Ավետիսյանը չունի կոնկրետ կողմնորոշում, 2020 թ-ի աշնանը նրան առաջարկվել էր զբաղվել ԴՆԹ-ի կառուցվածքային փոփոխությունների հետազոտությամբ և նախնական թեմայի վերնագիրը ձևակերպվել էր հետևյալ կերպ. «Թելոմերային ԴՆԹ-ի կառուցվածքային փոխակերպումների թերմոդինամիկական ուսումնասիրությունը» (ղեկ. ֆմգդ, պրոֆեսոր Ե. Բ. Դալյան): Սակայն 2021թ-ի սկզբից Վ. Ն. Ավետիսյանի մոտ հետաքրքրություն է առաջացել ամբիոնի պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանի խմբում կատարվող լիպիդային թաղանթների հետ նանոմասնիկների փոխազդեցությունների հետազոտության հանդեպ: Ընդառաջելով ուսանողի գիտական հետաքրքրություններին փոխվել է Վ. Ն. Ավետիսյանի թեման և, հետևաբար, ղեկավարը (ֆմգդ, պրոֆեսոր Վ.Առաքելյան): Պրոֆեսոր Վ.Առաքելյանի 2021-2022 ուս.տարվա ծանրաբեռնվածության մեջ արդեն ներառված են այդ մագիստրոսի ղեկավարման ժամերը:

Որոշեցին – Հաստատել մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վաղարշակ Նարեկի Ավետիսյանին թեզի վերնագիրը՝

Լիցքավորված նանոմասնիկների ազդեցությունը կենսաբանական լիպիդային թաղանթների էլեկտրական պարպման վրա:

Ղեկավար՝ ֆմգդ, պրոֆեսոր Վ. Առաքելյան:

Լսեցին – Անվանական թոշակ ստացող ուսանողների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ Ռ. Հակոբյանը: Նա նշեց, որ այս տարի պայմաններին բավարարում է (գերազանցիկ են 4 կիսամյակ) 7 ուսանող, կրթաթոշակ տրամադրվելու է նրանցից 5-ին:
Հակոբյանը ներկայացրեց թեկնածուներին:

Քվեարկության արդյունքում ընտրվեցին հետևյալ ուսանողները՝

Քունցման Մելանի Սիսի Պետերի
Վարոսյան Բաֆֆի Հրայրի
Մուրադյան Վիկտորյա Արթուրի
Չալյան Գոռ Վարդանի
Բադալյան Նունե Դավթի

Որոշեցին – անվանակն կրթաթոշակներ տրամադրել վերոնշված ուսանողներին:

Ֆիզիկայի Ֆակուլտետի
գիտական խորհրդի նախագահ՝



Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան